



ՇԱՐԼՈՒԹԵՐԹ  
Բաժանորդագիր՝ 10 Շր. սարկիան

Հասցի՝  
Réd. du jour. „VERADZNOUTIOUN“ -Roustchouk  
Ред. на в. „ВЕРАДЗНУТІОНЪ“ - Русе

# ԿԵՅՅԷ՛ ՄԱՅԻՍԻ ՄԷԿԸ.

## ՄԱՅԻՍԻ ՄԷԿԸ

Այն ժամանակ, երբ բորժուազի-  
ան, 1889 թվին, փարիզեան համաշ-  
խարհային ցուցահանդէսով սօնուէր  
Ֆրանսիական մեծ յեղափոխութեան  
հարիւրամակը, երբ միլիոնաւոր բան-  
ւորները աշխատանքի տակից դուրս  
եկած զանազան անպէտք փարթամու-  
թիւնները մէջ, — որոնք ներկայա-  
ցնում էին բազմատեսակ եւ վիթխարի  
չինութիւններ՝ իրենց շրջուցիչ կեր-  
տւածքներով ու գեղեցիկութեամբ, ու-  
կուց, արծաթից, թանկագին քարե-  
րից եւ այլ մետաղներից պատրաս-  
տած նրբերի առարկաներ, գեղեցիկ  
ու ճոխ արձաններ եւ նպարտ կոթող-  
ներ, հազար ու մի տեսակ բարդ մե-  
քենաներ եւ այլ բազմաթիւ ու բազ-  
մատեսակ ապրանքներ — ցոյց էր տա-  
լիս նա ամբողջ աշխարհին իւր գե-  
րիշխանութիւնը այդ բոլորը արտադ-  
րող աշխատաւոր ընդհանրութեան վը-  
րայ, իւր ոյժը, որով կարողանում է  
լափել միլիոնաւոր պրօլետարիտների  
արդար աշխատանքի վաստակը եւ նը-  
բանց արիւնքը քրտինքից առաջացած  
արդիւնքը՝ յանուն իւր անմիտ փառքի,  
չքեղութեան եւ իւր դասակարգային  
շահերի. այն ժամանակ՝ երբ այդ բոլոր  
ժողովրդան Փարիզում անց էր կաց-  
նում իւր անսպասելի եւ անմիտ օրե-  
քը՝ զեղի օրգիւններում, «հիւրե-փե-  
րները» շրջանում, երբ իւր անաս-  
նական կրքերին բաւարարութիւն տա-  
լու եւ ամենաշուշկեանք վարելու  
համար այս անգամ ալ ու ձախ աւելի  
եւս առատութեամբ էր ցրուում՝ ոչ իւր  
քրտինքից առաջացած ոսկիները. —  
ան՝ այդ ժամանակ, Փարիզի համեստ  
դաշինքներից մէկում՝ այդ վիթխարի  
ցուցահանդէսը եւ այլ ամեն ինչ իւր  
քրտինքով պատրաստող, այդ ուրա-  
խութեան պատճառ եղող, բայց ինքը  
տիրող, լացող, ամեն բանից զուրկ  
բանւորների քաջամարտիկ, հեղինակա-  
ւոր առաջնորդները — սօցիալիստները  
— շտայլութեան, փարթամութեան եւ  
զեղի օրգիւնների կողքին, որի մէջ  
թաղւած էր օտարակեր բուրժուազի-  
ան՝ համաժողով էին գումարել եւ մը-  
տածում, խորհում էին բանւոր դա-  
սակարգի դրութեան բարեփոխման եւ  
նրա պատմական ազատարար մարտը  
աշխարհի վրայ գնելու մասին։  
Նրանք մտածում էին նաեւ ամբողջ  
աշխարհի աշխատաւոր մասսաների —

պրօլետարիտների, — անհրաժեշտ մի-  
ութեան մասին։ Ան՝ այդ ժամանակ  
էլ, սօցիալիստների այդ համաժողո-  
վում, որոշեց սօնել Մայիսի Մեկը՝  
յանուն բոլոր պրօլետարիտների, բոլոր  
ընչազուրկ, հարստահարող թշուա-  
ների միջազգային եղբայրութեան, մի-  
ութեան եւ սիրոյ։ Ինչո՞ւ. — Որով-  
հետեւ պատմութեան բնական ընթաց-  
քը այսօր երեւան է հանել կապիտա-  
լիստների դասակարգ իւր ուրոյն շա-  
հերով ու ձգտումներով՝ տալով նրան  
միջազգային բնաւորութիւն, որովհե-  
տեւ այդ դասակարգի կողքին էլ բը-  
նական կերպով առաջացել է պրօլե-  
տարիտաւոր, որպէս որոշ դասակարգ իւր  
ինքնուրոյն, սեփական շահերով ստա-  
նալով նոյնպէս միջազգային բնաւոր-  
ութիւն։ Իրանց շահերի հակընդ-  
դրութիւնը ծնունդ է տւել կուրի,  
յեղափոխական մարտի, որը դարձեալ  
միջազգային բնաւորութիւն ունի  
Բոլոր երկրների կապիտալիստները  
միակերպ հարստահարող են միացած  
իրար հետ, Բոլոր երկրների բանւոր-  
ներն էլ հարստահարուած են նոյնպէս  
միակերպ՝ ընդհանրապէս վերցրած։ Եւ  
այդ հարստահարութեան վերջ դնելու  
համար անհրաժեշտօրէն պէտք է ամ-  
բողջ աշխարհի բանւորները միանան,  
որովհետեւ դրա մէջ է նրանց ոյժի  
զօրութիւնը, որովհետեւ այդ կենտ-  
րօնացած ոյժով կը կարողանան նը-  
բանք իրենց անմահ յաղթանակը ձեռք  
բերել, սօցիալիզմը իրականացնել։  
Վերոյիշեալ համաժողովում դիտ-  
մամբ որոշեց բոլոր ազգերի բանւոր-  
ների եղբայրութեան, սիրոյ եւ մի-  
ութեան այդ սօնը կատարել Մայիսի  
1-ին՝ որպէս գարնան մի գեղաձիւնդ,  
պարզ, կանաչազարդ եւ ուրախ ամիս,  
երբ ամբողջ բնութիւնը զարթնում  
է, կենդանանում ձմեռային մեռելու-  
թիւնից ու խաւարից, երբ մարդկանց  
սրտերը լցում են ուրախութեամբ,  
երբ երեւակայութիւնը ստանում է  
իւր թռիչքը, երբ արիւնը եռում է  
բողբոյ մէջ, երբ տանջուող մեծամաս-  
նութեան սրտերը լցում են երանե-  
լի ապագայի յոյսով, ամբողջ աշխար-  
հի պրօլետարիտների յարութեան, յաղ-  
թութեան յոյսով, հաւասարութեան եւ  
ճշմարտութեան յաղթանակի յոյսով։  
Իւրաքանչիւր տարւայ այդ օրը  
բոլոր բանւորները պէտք է դադարեն  
աշխատելուց, ժողովներ գումարեն, դե-  
մօնստորացրանք սարքեն եւ պահանջեն՝  
որ օրէնքով որոշէ, մտցւէ բանւորա-

կան ուրծաւեայ օրը, դրա հետ դնելով  
եւ այլ պահանջներ՝ ընդունուած վերո-  
յիշեալ համաժողովում։  
Մակայն ա՛յն երկրներում, ուր  
տիրապետողն է արաւիւտիզմը, ուր  
խայտառակ դեպագօտիզմի օրէնքներն  
են թագաւորողը՝ այնտեղի բանւոր-  
ները առաջին տեղը տալիս են իրենց  
խաղախական պահանջներին։ Նրանց  
Մայիսեան սօնը կրելու է, բնակա-  
նաբար՝ դիւտորական, մարտական  
բնաւորութիւն եւ նրանց կողմ  
լինելու է մարտական, ռազմիկ, եւ  
նրանց անմիջական գործը լինելու է  
վճռական, մահաբեր հարեւածներ տալ  
անարգ տիրաններին, գահալիծել նը-  
րանց մոտացութեան խաւար անդուն-  
դը՝ անարգել ընթանալու համար դէպի  
սօցիալիզմի վերջնական ու անմահ  
յաղթանակը։  
Մեր ուսու եւ այլ ազգի ընկեր-  
ներով մեր ոյժը կրկնապատկած եւ  
աւելի եւս «թեւ առած» ու ոգեւոր-  
ւած՝ մենք մեր ծանր, բայց քաղցր,  
բեռը տանելու պարտաւոր ենք բոլորս,  
ամեն տեղ։  
Կեցցէ՛ բոլոր բանւորների միջազ-  
գային եղբայրութիւնը.  
Կեցցէ՛ մարտական մայիսի մէկը.  
Կեցցէ՛ միջազգային յեղափոխա-  
կան Սօցիալիզմը։  
Բազում Անիխան

Ոսկի, մարգարիտ, մի կեանք բերկ-  
րալից...  
Իսկ մենք — խեղճ ոչխար, — աշխար-  
հին զարմացք  
Մեր բուրգն է դառնում թիկնոցի  
մանուածք։  
Եւ ի՞նչ է բերում մեզ աշխատանքը,  
երբ կորացնում է, սեղում մեր մէջ-  
քը։  
Ո՞ւր են պտուղներ մեր գործ-  
տինքի,  
Մենք մեքենայ ենք, մարդիկ վաղե-  
մի...  
Մեր աշխատանքը ամեն մի վայրկեան  
երկիրն է ցանցում հազար հրաշքով,  
Բայց մեզը շինուեց՝ տիրող գաւազան  
Մեղուներին է քշում անխռով։  
Ցնցոտիներով գարշ խրճիթներում  
Պատրաստ ենք խղճուկ մեր կեանքը  
կարճել,  
Եւ մեզ հետ միայն բուն է գիշերում,  
Եւ գիշատիչը թառում անարգել։  
Մեր երակներում սակայն աւելնով  
Տաքուկ արիւնն է ցնցում գալարուն,  
Է՛հ, ո՞վ չէ մեզինց տենչում կարօտով  
Դաշտերն ու կաղնին, ցերեկը սիրուն  
Դէ՛հ միմեանց համար ե՛կ կանգնենք  
արի  
Ու երբ խմում ենք խմբով, սրտագին,  
Թնդանօթ ձգեն — խմենք ու բարի,  
Վե՛հ ազատութիւն մաղթենք աշխար-  
հին։  
Թարգմ. Զրաբերդեան

ԱՆԽԱՏԱՆՔԻ ԵՐԳԵՐԻՑ  
ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ԵՐԳԸ  
(Եւսիփոլիյ-Դակնիկոսից)  
Երբ բանւորներին ճրագն է վառում  
Հէնց հաւախօտին, դեռ վաղ առաւօտ,  
Երբ մեզ անողոք կարիքն է քշում  
Գրօշներ համար զնդանների մօտ,  
Ու երբ մեր կեանքում մինչեւ վերջին  
չունչ  
Մարդու մկանունք չէ անում զազար,  
Դաժան ծերութեան առջեւ անտէրունչ  
Քանի ճկում ենք վիզներս խոնարհ, —  
Դէ՛հ, միմեանց համար ե՛կ կանգնենք  
արի  
Ու երբ խմում ենք խմբով, սրտագին,  
Թնդանօթ ձգեն — խմենք ու բարի,  
Վե՛հ ազատութիւն մաղթենք աշխարհին։  
Գետնիցը ժլատ, հողից աղբափիկ  
Եւ խոր ծովերից մեր ոյժը ռազմով,  
Յաւատե՛ կուով հագուստ, ուտելիք  
Պարգեւ է բերում աշխարհին ցաւով,  
Տե՛ս, հասուն պտուղ ու հասկեր  
դաշտից,

ԳԱՂԱՓԱՐԻ  
ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ  
II.  
Հնչ. Կուս. — Եր ծրագրով  
իրեն առաջին նպատակ է ընդու-  
նել հայի ճակատագիրը բաժանել  
թրքականից, քաղաքական ան-  
կախութիւն ձեռք բերել, և սա-  
կայն նա այդտեղ կանգ չի առ-  
նում, այդքանը վերջնական չի  
համարում և ոչ իսկ ապագան  
յանձնում բաղտին, ընդհակառա-  
կը, քաղաքական անկախութիւնը՝  
իրեւ միջոց և միայն միջոց՝ պի-  
տի գործածի իր հեռաւոր նպա-  
տակին հասնելու։ Եւ ահա այդ է  
պատճառը, որ մօտաւորին ձգ-  
տելով, հեռաւորը անտես չի թող-  
նում, և որովհետեւ մօտաւորի  
սկզբնաւորութիւնը պիտի երաշ-  
խաւորէ հեռաւորի յաջողութիւ-

նը, և, դարձեալ, որովհետեւ հայ բանւորի, հայ աշխատաւորի, հայ գիւղացու գիտակցական վերաբերմունքով պիտի դուրս հիմքը, դրա համար նրա դասակարգային շահը դարձել է և շարունակ պիտի լինի մեր հոգածութեան, մեր գործունէութեան ամենամեծ առարկան: Եւ հէնց աշխարհաշահայեցողութեան, քաղաքական դաւանանքի այդ տարբերութեամբ ենք զանազանուում ուրիշ կուսակցութիւններին:

Բայց ի՞նչն է դարմանը. — Դա սօցիալիզմն է, մեր հեռուոր նպատակի իրագործումը: Սօցիալիզմն է դարմանը, ուրիշ ապեզանի չկայ մեր դարաւոր վերքերի համար, ուրիշ միջոց չկայ հայ գիւղացու, հայ աշխատաւորի, հայ մեծամասնութեան, թէկուզ հայ ամբողջութեան շահերը պաշտպանելու համար. մենք ըստրուկ ենք, ուրեմն և դատապարտուած մեր ճակատի քրտինքով մեր արագեանողներին կերակրելու. մենք աշխատաւորներ ենք, բայց մեր աշխատանքի արդիւնքը մերը չէ. մենք գերի ենք և աւելի վատթար վիճակի ենթարկուած, քան երկու ձեռքերը ծախող բանւոր գերին. մենք քաղաքականապէս և տնտեսապէս գերի ենք:

Չնչակաւ իր սօցիալիստական քարոզներով, Հնչ. կուս.—ը իր սօցիալիստական ծրագրով ու գործունէութեամբ տասն և վեց տարի շարունակ հայ գիւղացու, հայ բանւորի, հայ հարստահարւածի դասակարգային շահն է պաշտպանել, հայ ազգի քաղաքական, տնտեսական անկախութեան դատին ախոյեան կանգնել՝ լիութի կատարելով իր միտքն, որի պատճառով իր հիմնադիրներինց սկսած մինչև այսօրայ գործիչները հալածուել, նախատուել, բամբասուել են: Հալածուում են ներքանք, որովհետեւ հայի քաղաքական անկախութեան հետ սերտ կապուած են համարում և տնտեսական ազատութեան հարցը, որ և մէկը միւսինց անբաժան են ընդունում և առաջինը վերջինի յաղթութեան միջոցը, ազգակը համարում: Հալածուում են, որովհետեւ հայ ժողովրդի աչքերինց—մտքի աչքինց—մշուշը փարատելու համար սօցիալիզմն են քարոզում՝ հին վամպիրներինց ազատելուց յետոյ նորերի ձեռքը շնչկնելու համար:

Հնչակեանութիւնը հայինցոյց է տալիս, որ ինքը ստրուկ արդիւնարեւոյ է վայելելու իրաւունքինց զրկուած, որ ինքը մի վիթխարի ոյժ է՝ բունութեան ծանր բեռը իր ուսերի վրայ կըրող ոյժ. և այսօր, ինչպէս և երէկ, առաջնորդում է նրան և օգնում, որպէսզի գիտակցական ցնցումով իր վրայինց թօթափէ, մէկ կողմ նետէ այդ բեռը. մինչգեռ իր ծոցինց բղխած վիժուկ

ները, դիմակաւոր և անդիմակ ոյժակալականները՝ բեմերինց ու անկիւններինց նրա ակննչն ի վար փախում են. ոմի՛ մի՛ ցընցելի, տար այդ բեռը. երբ ազատենք, այն ժամանակ կը մըտածենք այդ մասին: Բայց ի՞նչ է ազատութիւնը. չէ՞ որ եթէ տանենք այդ բեռը, մեզ հալածող չկայ. եթէ կամաւազուրկ խնարհութեամբ պետական հարկերը վճարենք, մեր կեանքերը կապահովեն՝ որպէս ոչխար մեզ խուզելու, կթելու և մեր շղերով կերակրելու համար. եթէ մեզ յատկացրած «բայեա» անունի պատշաճաւոր սահմանագծերը ճեղքել անցնել չփորձենք, այլ պարփակուած մնանք այդ սահմանների մէջ՝ ստրկութեան հարկը վճարելու պայմանով, գահի առաջ անհատարիմ չենք ճանաչել:

Պեանքի և գոյքի ապահովութիւն ձեռք բերենք նախ փութում են հնչակեանութեան թղուկ հակառակորդները և տգիտաբար իրենց ժանիքները կրճտացնում սօցիալիստներին վրայ:

Կեանքի, գոյքի անսահման ապահովութիւն է տիրում եւրօպայում. բայց ո՞ւմ կեանքը, ո՞ւմ գոյքն է ապահով: Ապահով է ունեցողի կեանքը, անձեռնմխելի է ունեցողի գոյքը. իսկ չունեցողի կեանքը այսօր անապահով է, վաղն էլ և անտուգութեան մատնած: Սակայն ազատութեան օրէնքը իրեն իրաւունք է տալիս իր ճարտար կրթութիւնից օգտուելու, իր նմանների շղերով, աշխատանքով հարստանալու, կարածների տէր դառնալու: Պաշարհը դժակ է, դու՛ գանակ. կտրիր և կեր, եթէ կարող ես. այս չէ՞ այսօրայ ազատ մրցակցութեան (free trade), ազատ գործառնութեան օրէնքը—հին փիլիսոփայութեան կերպարանափոխուած թէօրիան: Եւ կեանքի, գոյքի ապահովութեան անունով խօսողները այս ողորմելի, հակամարդկային անարդար թէօրիայի պաշտպաններն են: Նրանք դեռ ասում են թէ՛ հայ գիւղացին հող չունի, նրան հող պէտք է տանք, երբ Հայաստանը ազատի... Բայց ի՞նչ. այսօրայ սեպհականատէրը վաղն էլ սեպհականատէր է, ուրեմն ո՞ւմ հողը ում պիտի տանք: Խեղկատակութիւն, աչքակապութիւն: Եւ նրանք, այդ հակառակորդները, հալածում են Հնչակեանութիւնը, որ հայ ժողովրդին, հայ գիւղացուն, հայ բանւորներին քարոզում է համայնատիրութեան, համայնական աշխատութեան, համայնական վայելման վարդապետութիւնը. հակառակում են նրանք, երբ նա ճշմարիտ ազատութիւնը գտնում է դասակարգերի վերացման մէջ, և աշխատում սօց. հոսանքի առաջ թուժ կանգնել, Հնչ. ծրագիրը խեղաթիւրել, մինչգեռ ժողովրդի աշխատաւոր մեծամասնութիւնը՝ շնորհիւ հնչ. պրօպագանդային իր դասակարգային շահերն ըմբռնելով, սօցիալիզմի աւետաւոր գաղափարները հետզհետէ ընդգրկում է՝ հնչակեան գործի տակ գիտակցական կուռ պատրասուելու համար:

Եւ այսօր, իրերի բնական ընթացքով, ինչպէս և նորագոյն արտակարգ երևոյթների շնորհիւ, հասել ենք այն կէտին, այն վերջնական համոզման, որ ժողովրդի իղձերը սօցիալիզմով պիտի իրականանան եւ, որ Հնչ. տասը և վեց տարւայ քրտնաշան աշխատութիւնները պարսպ չեն մնացել, սօցիալիզմը հայ կեանքում մտնել է իր պատմական դերի մէջ—քաղաքական, տնտեսական թէ՛ մի՛ր տապալելու դերի մէջ—եւ սօցիալիզմի փրկարար գաղափարի ազդեցութիւնը տաճակայեցի, ուստահայեցի, պարսկայեցի և գաղթական հայերի վրայ սաւառնելով՝ նրանց բաղադր կապել է ճնշած ժողովրդների բաղադր հետ, որոնք միայնակ ոյժով հանգրանէ հանգրան պիղծելով բունպետութիւնների որմերի հիմքը, մի օր յաղթական ազգակներով պիտի գոչեն «անկցի» բունպետութիւն, կեցցէ՛ սօցիալիզմ, կեցցէ՛՝ առկալարական սահմանադրութիւն:

Հ. Ա.—Եւսնց

**ՄԱՅՔՍՅԱՆ**  
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՕՆ  
ԲԱՆԻՈՐՆԵՐՈՒ՝

Սկսած 1890 թուականէն, եւրոպայի և Ամերիկայի բանւորները Մայիսի 1-ին (ն. տ.) կը տօնեն՝ 1889-ի Սօցիալիստական միջազգային կօնգրէսի որոշման համաձայն՝ համաշխարհային այն մեծ տօնը, որ տարուէ տարի նշանակալից կը դառնայ: Որքան որ բանւոր ճնշուած դասակարգը կը հրճուի այդ մեծ օրին ապագայի իր յաղթանակի հեռապատկերով, այնքան ալ տիրապետող բուրժուազիւնը կը համակուի շրջաձգական սարսուռով մը և օգնութեան կը կանչէ կառավարութեան զօրքը, որ պատրաստ իր տխուր դերը կատարելու շատ անգամ կը միջամտէ զէնքով և ցոյց ընող իր բանւոր եղբայրները կը կտորէ:

Սակայն բուրժուազիւն և անոր անմիջական օգնութեան հասնող կառավարութիւնները զղալու վրայ են թէ՛ 89-ի սօց. կօնգրէսի որոշումով, այդ օրէն իվեր կատարուած գործազուլները և աշխատանքի օրուան ուր ժամի ինչնելու բուռն պահանջները շատ աւելի զօրաւոր են, քան իրենց՝ բանւորը անօթի ձգելու սպառնալիքները և հրացանները:

Բայց ինչո՞ւ բուրժուազիւնը ֆաղուած հրատ. Հնչ. կուսակ. Վայիսի Մեկը՝ գրքոյկէն:

յին ձեռնառու չէ բանւորներու, աշխատաւորներու աշխատանքի օրուան կարճեցնելը և կամ ի՞նչ շահ ունի բանւորը իր այդ պահանջին մէջ: Այդ մասին համառօտ կերպով տեղեկացնելէ առաջ ըսենք նախ թէ կապիտալիստի (գործաճրանատէրի, կարածատէրի և յին) եկամտքը կը գոյանայ բանւորի ճրի աշխատանքին: Առաջին հայեցողով քիչ մը տարօրինակ կը թուի աս: Չէ՞ որ տէրը կը վարձատրէ իր բանւորը: Այո՛, կը վարձատրէ, սակայն բանւորը ձրի կաշխատի իր տիրոջը համար: Աշխատանքի վճարը ուտեստն է բանող գործաւորին, ինչպէս գարին, խոտը՝ բանող ձիւն: Կարելի չէ բանող ձին չկերակրել: Նոյնպէս կարելի չէ չկերակրել բանւորը, աշխատաւորը: Սակայն այդպէս չէ: Տէրը միշտ կաշխատի կերակրել իր ձին, որովհետեւ իր սեպհականութիւնէ, որովհետեւ անոր մահը վնաս կը բերէ իրեն: Իսկ մէկ, երկու, եւրեք, մինչև անգամ հազարաւոր բանւորներու մահը վնաս չի՞տար իրեն՝ քանի որ անդինանդործ, անօթի և աւելի քիչ օրավարձով աշխատող բանւորներ պակաս չեն:

Ըսինք թէ վարձու բանւորը ձրի կաշխատի իր տիրոջը համար Ահա թէ ինչպէս: Դործարանի բանւորը, ըսենք, կը ստանայ օրական 1 և կէս ֆրանք: Պարտաւոր է ան այդ գրամին փոխարէն տիրոջը համար աշխատել: Ենթադրենք որ այդ աշխատանքը բանւորը կը կատարէ վեց ժամուան մէջ. և եթէ գործարանի մէջ աշխատութիւնը կըսկըսի առտուան ժամը 5-ին, այն ատեն բանւորը կէս օրին արգէն աւարտած կըլլայ իր աշխատանքը և հատուցած իր ստացածին փոխարէնը: Բայց դործարանատիրոջ պէտք է եկամտք, շահ, հասոյթ: Եւ ահա ան կըստիպէ գործաւորը աշխատիլ մինչև իրիկուան ժամը ութը: Այդ բոլոր ժամանակը գործաւորը աշխատած կըլլայ ձրի: Անաւայր ճրի աշխատանքով աշ կըստիպուի գործաւանասիրող եկամտք:

Այսպէս, եթէ բանւորը օրական 13 ժամ աշխատած ըլլայ՝ (իր ստացած վճարին փոխարէնը տալու պարտաւորութեամբ) իրեն համար աշխատած կըլլայ ամենէն շատ 5 ժամ. իսկ մնացած 8 ժամը ձրի աշխատած՝ գործարանատիրոջ համար, որուն կապիտալին վրայ կաւելնայ 100-ին 40, 50 և մինչև իսկ 60: Ուրեմն ամէն 1 ֆրանքը կուտայ անոր 40, 50 կամ մինչև իսկ 60 սանթիմ, իւրաքանչիւր հազար ֆրանքը՝ 400, 500 կամ մինչև իսկ 600 ֆր. շահ:

Այսպէս, պարզ կը տեսնուի թէ կապիտալիստին եկամտը կը գոյաւայ բանւորին ձրի աշխատանքէն: Հետեւաբար, որքան շատ աշխատի բանւորը, այնքան

ալ գործարանատիրոջ շահը աւելի կը լլար : Իսկ շատ աշխատելու համար ալ պէտք է քանկորական օրը երկար ըլլայ . ինչ որ ձեռնառու է գործարանատիրոջ : Բայց բանւորին համար ատոր հակառակը, այսինքն պէտք է կարճ ըլլայ աշխատանքի օրը :

Եթէ գործարանի բանւորները օրական 13—14 ժամուան փոխարէն աշխատելին միայն 10 ժամ, այն ատեն անոնք թէ աւելի քիչ կը յոգնելին և թէ կը վնասկեին աւելի :

Բացարձեք օրինակով : Առնենք կտաւի գործարան մը և ենթադրենք թէ 60 մարդ կաշխատի հան օրական 10 ժամով : Ուրեմն 60 մարդը միասին օրը պիտի աշխատին 600 ժամ և պիտի գործեն այսինչ չափով կտաւ : Բայց ահա տէրը որոշեց որ անկէ ետքը բանւորները պէտք է աշխատին օրական 12 ժամ : Հրամանը կը տրուի . և բանւորները ճամբայ դրուելու սպառնալիքէն վախնալով կը հնուզանդին :

Այսպէս հիմա գործարանատիրոջ համար դարձեալ պէտք է 600 ժամուան աշխատանք . բայց որովհետեւ իւրաքանչիւր գործարար յանձն առաւ աշխատիլ 12 ժամ, հետեալքար գործարանին հարկաւոր է 50 բանւոր, որոնք 600 ժամուան աշխատանքը պիտի կատարեն . . . Բնականաբար տրտնւած լլով և աւելի յոգնած : Այս կերպով տէրը մտաւրայ կը դնէ 10 քանկոր, որոնք ուրիշ գործարաններու տէրերն ալ միեւնոյն բարեբար միջոցը գործ գրած են ) կը մնան անգործ ու անօթի : Անգործներու թիւը շատալով, այդ խեղճ բանւորները կը ստիպուին աւելի տեսնել տէրի կոտորել, որով աշխատանքի վճարը կ'իջնայ :

Հաշիւ եղած է թէ՛ քանկոր .

ները աւելեան քիչ կը վնասկին այն արհեստանոցներուն մէջ, որ քանկորախան օրը աւելեան երկար է : Այդ բանը շատ պատճառներ ունի, որոնցմէ մէկն ալ սա է թէ, որքան երկար ըլլայ բանւորական օրը, տէրերն ալ այնքան բանւորներու քիչ պէտք կուենան . իսկ տեսանք թէ, որքան քիչ բանւորները աշխատեցնեն տէրերը, այնքան ալ աշխատանքի վճարը կ'իջնայ :

Իսկ հիմա, ենթադրենք թէ վերև յիշուած կտաւի գործարանի բանւորները կրկին սկսան աշխատիլ օրական 10 ժամով : Այդ պարագային նոյն գործը արտագրելու համար, դարձեալ 60 բանւորի պէտք կայ : Անգործ բանւորները վարձուելով՝ այլևս պէտք չեն ունենար զին կտորելու . իսկ տէրը հիմա արդէն զիտէ որ այնքան ալ յարմար չէ բանւորները ճնշելը, որովհետեւ եթէ գուրս գան անոնք, այն ատեն գոյուար կը լլար նորեր գտնելը : Եւ ահա գործարանատէրը կը դառնայ աւելի մեղմ, տաւի զիջանոց : Բանւորներն ալ յարմար առիթը համարելով կը պահանջեն օրավարձի աւելնալը : Տէրը կը զիջանի :

Այսպէս, քանկորախան օրուան կարճացնելն աշխատանքի վճարը կարճեցուց : Բանւորները լաւ պէտք է ըմբռնեն այս կէտը : Շատ անգամ անոնք կը կարծեն, թէ որքան շատ աշխատին, այնքան շատ կը ստանան : Չարաշար կը խաբուին : Ընդհակառակը, որքան շատ աշխատին, այնքան շատ կը վնասուին :

Այդ պատճառով պէտք է բանւորները միշտ ջանան կարճեցնել իրենց բանւորական (աշխատանքի) օրը :

Բնականաբար երբ մէկ հոգի առանձին աւելի քիչ աշխատէր իր ընկերներէն, այդ պարագային

վնասուողը ինքը կը լլար : Շատ նպատակաւորաբար և շահաւոր կը լլայ, երբ քոյր քանկորները միասին ձեռնարկեն ատոր :

Թեքուս ոմանք ըսեն, թէ այն պարագային, երբ բանւորներուն կը վճարուի հասոյ (ամէն մէկ շինած ապրանքի համար առանձին), ձեռնառու է անոնց երկարեցնել իրենց բանւորական օրը և ո՛չ թէ կարճեցնել : Սխալ է ատրիկա :

Հատով վճարի ժամանակ նոյնպէս բանւորը ձրի աշխատած կը լլայ գործարանատիրոջ համար, որովհետեւ, ըսենք, եթէ ան իւրաքանչիւր ապրանքի համար ըստանայ 30 սանթիմ, գործարանատէրը նոյն մէկ հատէն կը ստանայ 30 և մինչեւ իսկ 45 և 60 սանթիմ շահ : Որքան շատ արտադրատէ բանւորը, այնքան տէրը շահաւոր կը լլայ : Իսկ երբ շատ աշխատի լանդը, այն ատեն քիչ գործարանի պէտք կը լլայ, հետեալքար և, ինչպէս տեսանք, աշխատանքի վճարը քիչ կը լլայ :

Ուրեմն, հասոյ վճարի ժամանակ ալ քանկորներուն ձեռնառու է աշխատանքի օրը կարճեցնելը :

Աշխատանքի վճարի քիչ եղած պարագային բանւորը չի կըրնար իրեն համար պէտք եղած գնումները կատարել : Երբ կը կարճեցնուի բանւորական օրը, աշխատանքի վճարը կ'աւելնայ, որով բանւորը աւելի դրամ ունենալով՝ իր գնող ոյժը կարելի կ'ըլլայ և շատ ապրանք կը գնէ : Իսկ այդ ապրանքները շինողները դարձեալ նոյն բանւորներն են, այնպէս որ որքան շատ ապրանք գնեն՝ այնքան ալ գործարանատէրերը շատ բանւոր կը վարձեն . իսկ տեսանք որ տէրերը որքան պէտք ունենան բանւորներու, այնքան ալ աշխատանքի վճարը բարձր կը լլայ :

Ուրեմն, քանկորախան օրը

կարճացած ժամանակ աշխատանքի վճարը կարելի կ'ըլլայ ևս աւելեան, որ կարելի է քանկորի գնող ոյժը :

Բայց գործարանատէրերու հաշուին չի դար աշխատանքի դինը բարձրացնելը : Այդ պատճառով բանւորական օրուան կարճացած միջոցին անոնք կաշխատին աւելի շատ մեծեւայ գործածել : Մեքենաները կրնան շատ բանւորներու տեղը բռնել և խոչընդոտ ըլլալ գէթ մինչև մէկ աստիճան վճարի այն չափով բարձրանալուն, ինչ չափով որ պիտի բարձրանար ան բանւորական օրի կարճնալովը : Ատկից զատ բանւորական կարճ օր եղած ժամանակն ալ գործարանատէրերը կըրնան, դարձեալ իրենց մեքենաներու օգնութեամբ, ստիպել բանւորներուն աշխատիլ այնչափ, որ չափ որ անոնք առաջ կաշխատէին : Յայտնի է որ մարդ մը 10 ժամուան ընթացքին մէջ երբեմն կը շինէ այնքան, որքան 15 ժամուան մէջ, եթէ աշխատի աւելի սիրով, աւելի տիրապետութեամբ : Գործարանատէրերը կրնան բանւորներուն ստիպել աւելի աշխատաւորութեամբ քանի : Այդ պարագային վճարը չի բարձրանար բանւորական օրի կարճնալէն, բայց և այնպէս այդ կարճնալը դարձեալ բանւորին համար շահաւոր է :

Բանւորական երկար օրը և վատ մտուցը այնքան կը հաւելցնէ, կը մաշեցնէ բանւորը, որ ան վաղահաս կը ծերանայ : Բանւորները կրնան և պէտք է պահանջեն աշխատանքի օրուան կարճնալը՝ նոյն իսկ իրենց առողջութեանը համար : Ատկից զատ, օրուան կարճնալը ունի նաև սառնամանակ օգուտը, որ քանկորներուն կոտորելու համար շահաւոր է : Անհրաժեշտ է բանւորին ու-

Լ. ՔՕԼՍՏՈՅ ԵՒ ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ

Մէկ խօսքով, Թօլստոյ, բոլոր միասնակներու պէս, յաւիտենական բարոյական օրէնքի կարգը դասած է ներկայիս գործարանական մասսաներու մէջ իրագոյն գոյութիւն ունեցող ապրելու եղանակը : Բան մը որ շատ նըպատակաւոր է առանձնաշնորհալ գասակարգերուն : Իսկ այն հաղուաղէ պրպէններուն, երբ Թօլստոյ կը հետանայ իր կրօնական հայեցակէտէն և կը շօշափէ թանձրացեալ ( конкретенъ ) հարց մը, այն ատեն ան կը ներկայանայ իբր շատ չափաւոր ազատական մը և աւելի իբր պահպանողական : Օրինակի համար, երբ կը քննադատէ մասնաւոր սեփականութիւնը, Թօլստոյ բնաւ տեղ մը չըսեք թե ան պէտք է փոխուի : Եւ երբ քարոզելը կը մտանայ այս խնդրին, անմիջապէս կը թողու իր յստակ ընտրատական լեզուն և առհասարակ սապէս կը խօսի . « հոգ մը՝ տանիք ձեր հոգիին, ձեր ուտելու և խմելու մասին : և ո՛չ ալ մասնացէք մարմինը ինչ բանով ծածկելու : Հոգին անուղէն և մարմինը հաղուաղէն

աւելի չարժեք : Նայեցէ՛ք երկրի թուղաններուն, անոնք ո՛չ կը ցանեն, ո՛չ կը հնձեն և ո՛չ ալ կը մտաբերին : և ձեր երկնային հայրը զանոնք դարձեալ կը սնուցանէ՞ » Եւ այլու Մանաւոր սեփականութեան մասին եղած ամբողջ քննադատութիւնը վերջ ի վերջոյ կը յանդի հոն, որ հարուստներու կը յանձնուի իրենց մօտիկ աղքատը սնուցանելու : հագուելոցն ըստ յակամ հոգը, աւետարանական քարոզ մը, որ ո՛չ միայն չի հակառակի մասնաւոր սեփականութեան, այլ՝ կը վաւերացնէ այդ հարատեթիւնը իբր անփոփոխելի քաթէկօրիա մը : Շատեր այն հայեցողք ունին թէ ներկայ կազմի քննադատութիւնը առանց նկատի առնելու անոր մեկնման կէտը և եղանակը թիւնը, կըրնայ յեղափոխական աղբիւր թիւն ունենալ մտքերու վրայ : Մեր կարծիքով ստիպեալ մեծ շփոթութիւն մըն է : Իւրաքանչիւր հայեցակէտ, որքան յետադիմական ըլլայ, կըրնայ պարունակել և յաճախ կը պարունակէ ճիշդ քննադատական մտքեր, որոնց ուժը և փայլը կ'ախտու ունի այդ հայեցակէտը ներկայացնողին տաղանդաւորութեան աստիճանէն : Ունէ վրպա-

գիւր որ կ'իտեալականացնէ միջին մասը գործերը, կրնայ սօցեալիստներու հանդիպել կապիտալիստական կարգերու քանի մը տարբերութեանը : Ինչպէս աստիճան մէջ, Գիտաբանութիւնը կարելի է, այլ՝ անոր մեկնման կէտը և եզրակացութիւնը : Յեղափոխականը քննադատութեան կ'առնէ գոյութիւն ունեցող կարգերը՝ զանոնք տապալելու և առաջ անցնելու համար : Իսկ յետադիմականը նոյն քննադատութեան կրնայ ենթարկել զանոնք, պատուութեան անիւր ևս դարձնելու համար :

Եւ եթէ յետադիմականին քննադատութիւնը խիստ է և յանդուգն, այդ ուրիշ բան չապացուցանե՞ր : Բայց եթէ այն, որ հասարակական ձեւերը տարբարութեան այնպիսի լուրջ ատիճանին հառած են որ մինչև իսկ իրենց վրայ հրաբուս են ուղարկուած թիւնը նաև անոնց, որոնք ի ընէ հակամէտ չեն մտածողութեան յեղափոխական եզրակարգին : Ինքն ըստ ինքեան հակառակ է, որ սօց-դէմօկրատիան կըրնայ և պէտք է օգտուի ժամանակակից ընկերային կարգերու քննադատութեանն՝ որ խմբի կողմէ ալ գայ ան, բայց սօցեալ-դէմօկրատ-

տական վարդապետութիւնը արտադրատեղով իր աշխարհայեցողքով մեր ժամանակի քոյր յեղափոխական ձգտումները, պէտք է ուրիշ հասարակական հոսանքներու մասին իր ըրած վերլուծութեան և գնահատութեան մէջ, ուշադրութիւնը կեդրոնացնէ անոնց զըլլաւոր և Էական սպառնալիքութեան վրայ և անոնց մասին զատէ ո՛չ թէ այս կամ այն ձևաւար հայեցակէտով, այլ՝ անոնց ընդհանուր ուղղութեան վրայ հիմնուելով :

Իրեւ արուեստագէտ . Թօլստոյ կարելի չէ որ չի նկատէ կապիտալիստական ընկերութեան քայքայման բրօքսը և յեղափոխական պրօլետարիատին յաղթական յառաջխաղացումը : Եւ որքան ան յստակ կը տեսնայ այս բանը, այնքան խիստ զըլլայ անոր քննադատութիւնը ներկայ ընկերային պայմաններու : Եւ անոր հետեւ ալ, միւս կողմէ, այնքան կը դորանայ անոր՝ ընդհանուր սիրոյ և չարիքին բռնութեամբ չընդդիմանալու մասին ըրած հակապրօլետարիական քարոզը :

(Շարունակելի)

«Ново Време»

